

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի այցը Արագածոտնի մարզ

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոթյանը մարտի 25-ին աշխատանքային այցով Արագածոտնի մարզում էր: Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի հետ նախարարն այցելեց Թալինի տարածաշրջանի մի շարք համայնքներ՝ Թաթուլ, Հացաշեն, Սուսեր, Չարինջա, Նոր Արթիկ, Ցամաքասար:

Համայնքի բնակիչների հետ հանդիպումների ժամանակ նախարարը ծանոթացավ գյուղացիների կողմից բարձրացված խնդիրներին: Մասնավորապես, Թաթուլում առաջնային համարվեցին մսի, ցորենի, կաթի մթերման եւ մերամշակման հարցերը, Հացաշենում առկա են խմելաջրի, Սուսերում, Նոր Արթիկում եւ Ցամաքասարում՝ ճանապարհների վերանորոգման, ոռոգման ջրի, Չարինջայում՝ մշակույթի տան տանիքի վերանորոգման խնդիրները: Նշված հարցերի կապակցությամբ նախարարը անհրաժեշտ պարզաբանումներ կատարեց եւ մարզպետի հետ քննարկեցին դրանց լուծման հնարավորությունները:

Նախարարը նշեց, որ պետությունն այսօր իր առաջնահերթ հարցերից մեկն է համարում տարածքների տնտեսական զարգացումը, որով փորձ է արվելու ներդրումային քաղաքակրթյան ճանապարհով համայնքները ֆինանսապես ավելի կայուն դարձնել: Նախատեղված ծրագրերն իրականացվելու են մարզպետի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների համատեղ ու հետեւողական աշխատանքով:

Այցի շրջանակում կայացավ այցելություն համայնքների դպրոցներ, կրթահամալիրների շենքային պայմանների բարելավման համար ձեռք բերվեցին պայմանավորվածություններ:

Հաջորդ կանգառը Կոշ համայնքում գտնվող «Գոլդեն Գրեյի Արմևս» ընկերության գինու-կոնյակի գործարանում էր: Գործարանի ղեկավարության ուղեկցությամբ նախարարը եւ մարզպետը շրջայց կատարեցին գործարանի արտադրամասում, ծանոթացան գործարանի հզորությանը եւ ընկերության զարգացման ծրագրերին: Ներկայումս ընկերության խաղողի եւ պտղատու այգիների տարածքը կազմում է 125 հա: Ընկերությունը մասնակիորեն լուծում է տեղի համայնքների բնակիչների զբաղվածության հարցը. այստեղ աշխատում է շուրջ 200 մարդ:

Այնուհետև նախարարին ուղեկցեցին Աշտարակի բժշկական կենտրոն, եւ կատարվեց շրջայց կենտրոնի բաժանմունքներում: Կենտրոնի ղեկավար կազմի հետ քննարկվեց բուժհաստատության արդիականացմանը վերաբերող հարցեր: Պատասխանատուների

հավաստմամբ, այժմ Աշտարակի բժշկական կենտրոնն ունի հիմնանորոգման, նորագույն բժշկական սարքավորումներով հագեցնելու խնդիր: Դավիթ Լոթյանը նշեց, որ կենտրոնի կարիքներն ամբողջացնելուց հետո այս հարցը կքննարկվի ՀՀ առողջապահության նախարարի հետ:

Արագածոտնի մարզ աշխատանքային այցի շրջանակներում Դավիթ Լոթյանի վերջին կանգառը Աշտարակի համայնքապետարանն էր: Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի, Աշտարակի քաղաքապետի և տարածաշրջանի գյուղապետերի հետ նախարարն անցկացրեց խորհրդակցություն՝ համայնքային ծրագրերի և համայնքներում առկա հրատապ խնդիրների լուծման ուղիները քննարկելու նպատակով: Համայնքապետերն իրենց հերթին բարձրացրին տեղերում առկա հիմնախնդիրները: Այսպես՝ Ոսկեհատում օրակարգային է խորքային հորերի գործարկման, Ոսկեվազում՝ ոռոգման ջրատարի 1 կմ. հատվածի վերանորոգման խնդիրները: Քննարկվեցին նաեւ համայնքների խոշորացման ծրագրի հետ կապված հարցեր:

Մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին